Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

зала
шкафъ
полка
№

ՓԱՌՆԱԿԻՍ

# ԿԸ ԿԱԿՂԵՍ՝ ԿՈՒՏԵՍ

ՎՕԴՐՎԻԼ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

ԵՐԵՎԱՆ
ՏՊԱՐԱՆ „Գ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.“
1905

891-99
Փ-24

Арм.
Н 3-36372
891.99
Կ-24

ՓԱՌՆԱԿԷՍ

13 APR 2011

# ԿԸ ԿԱԿՂԵՍ ԿՈՒՏԵՍ

ՎՈՒԼՎԻԼ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԳԻՆԸ Է 50 ԿՈՊ.

Инв. № 13684

ԵՐԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ „Պ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.“
1905

28.08.2012
59.781

Дозволено Цензурою Тифлисъ 29 Января 1905 г.

ՀՍՍՌ-Ամ ԳԳՄ
40726-63

Настоящая піеса подъ заглавіемъ „Размякнешь“ разрѣшена г. И. Об. Главноначальствующаго Гражданскою частью на Кавказѣ къ представленію на сценахъ края. Г. Тифлисъ 14 Февраля 1905 г.

---

*Երկինք—գետինք գլխուս մթնան,*
*Անտուն—անտէր կուլամ ես,*
*Եարիս տարան, ջանիս տարան,*
*Հոնգուր—հոնգուր կուլամ ես ...:*

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

*Նոդիրոդամ եմ*

*ՄԻՇՏ ՈՒՐԱԽ ԿՆՈՋՍ*

*ԹԱՑԵՐԱՍԷՐ ԵՒ ՏԱՐԱԳԻՐ*

**ՑԻԿԻՆ ԸՆԹԷՆԻՆ**

**ՓԱՌՆԱԿԷՍ**

29 Դեկտ. 1904 թ.
Երեւան:

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԵՔ.

| | | |
|---|---|---|
| 1, Գաբրիէլ Դովլաթեան, կալուածատէր | 60 | տարեկ. |
| 2, Նուարդ, նրա կինը | 55 | » |
| 3, Օր. Պայծառ, նրանց նշանադրուած աղջիկը | 36 | » |
| 4, Սահակ Բարթողեան. Պայծառի նշանածը. | 45 | » |
| 5, Կամսար, Սահակի ընկերն ու խաչեղբայրը | 25 | » |
| 6, Ղազար, հարուստ բազազ. Գաբրիէլի մօրաքրոջ ամուսինը | 50 | » |
| 7, Հերիքնազ, նրա ամուսինը | 45 | » |
| 7, Օր. Եսթեր, նրանց աղջիկը | 18 | » |
| 9, Թոմաս, Դովլաթեանի ծառան | 18 | » |
| 10, Նանագիւլ, Դովլաթեանի աղախինը | 14 | » |

Անցքը պատահում է 19 ... թ. № քաղաքում.

---

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁՈՆՑ ՆԿԱՐԱԳԻՐԸ.

*Գաբրիէլը, Ղազարը, Սահակն ու Կամսարը* հագնում են եւրոպական շորեր, ամէն մէկը իր հասակին համապատասխան գոյնով ու ճաշակով։

*Նուարդն ու Հերիքնազը* մութ գոյնի կտորից ճոխ շրջազգեստներ, մանաւանդ վերջինը։ Երկուսի գլխներն էլ կապած։

*Պայծառն ու Եսթերը* եւրոպական զգեստով են և հագնւում են վերջին տարազով և գարդարանքով։ Վերջինը կողքից բաշում է ոսկէ շղթայով ըէդիկիւլ։

*Թոմասը՝* սև պիջակ, տակից զունաւոր արխալուխ։ Ծածկում է սև մորթից տափակ գլխարկ (գարիբալդի)։

*Նանագիւլը՝* գլուխը բաց, երկայն ծամով։ Հագնում է կարմիր շրջազգեստ և ուսերից մինչև ներքև սպիտակ զոգնոց։

---

## „ԿԸ ԿԱԿՂԵՍ՝ ԿՈՒՏԵՍ“.

ՎՕԴԲՎԻԼ ՄԷԿ ԱԲԱԲՈՒԱԾՈՎ.

---

*Բեմն ներկայացնում է մի շքեղ սենեակ՝ Գաբրիէլի տան մէջ։ Մէջտեղից եւ կողքերից մէկ մէկ դուռը, աջակողմեան պատի դրսեն մօտ մի լուսամուտ, որ նայում է փողոցին։ Ձախակողմեան պատի վերայ պատի ժամացոյց։ Մուտքի պատի աջ եւ ձախ կողմերում միաձեւ մեծ շրջանակների մէջ Գաբրիէլի հօր եւ մօր պատկերները։ Պատկերների տակ մէկ մէկ խաղասեղան՝ մի մի զոյգ բազմաթեւ աշտանակներով, որոնց մէջ ճաշակաւոր ծաղկամաններ՝ ծաղկեփնջերով։*

---

## ՏԵՍԻԼ Ա.

### ԹՈՄԱՍ.

---

(Ճակատի բրտինքը սրբելով՝ ներս է գալիս), Օվվվէ ... էլ բազարումը դատ չը թողի՝ կրեցի տուն ... էլ հաւ ու ճիւ, էլ գառն ու հնդուշկա, էլ ձուկ ու կաքաւ, էլ գինի ու արաղ, էլ ոսմ ու կանեակ, էլ մածուն ու հում սեր, էլ խաղող ու տանձ, էլ գեղձ ու ձմերուկ, էլ գութմա ու խնձոր, էլ կանֆէտ ու մանֆէտ, էլ բուլկի ու մուլկի, էլ ես ինչ գիտեմ՝ ինչ քար ու քացախ ... ինչ ա՝ փեսէն գալիս ա ... ջաուին ջը-

հանիամին գայ, հոգիս դուս եկաւ ... տեսնես ինչ թահար մարդ ա ... ջոմարդ ա՞ թէ չէ: Ըսօր Թըլֆըղուց գայ պըտի՝ մի քանի օր եղը պսակուի ... հարաբ ինչ փէչքաշներ ա բերելու ... ասում են հարուստ ա: Էրնէկ բարիշնին ... լաւ աղջիկ ա ... հրլա քի՝ մին արխալրղացու տուել ա ... թէ մին չուխացու էլ նշանածը կը տայ՝ քէֆս քօք կըլի ... ամա թէ տուց՝ ոչ էն եմ հագնելու՝ ոչ էն ... ջուխտն էլ պահելու եմ իմ հարսանիքին հագնեմ ... օրը գայ՝ բարին հետը ...: Աչքս, խոստովանք պահէք, էս մեր Նանագիւլի վրէն ա ... ով ա գիտում բսկի չէք տեսել ... որ տեսնէք՝ կը հաւանէք ... կասէք մաշալլահ Թոմաս, լաւ թիքա ա ջոկէ ... լաւ տուուղ զաղ ա, թխլիկ ու քօք՝ ոնց որ մի փուռն բօմբի ... ամա ոչ ինքն ա խարար, ոչ աղէս, ոչ խանումը՝ ոչ էլ բարիշնէն ...: Երկու շարաթ կըլի՝ ինչ եկել ա ու սիրաս էրել՝ փթոթել ... երնէկ ոչ գար՝ ոչ էլ ինձ էս կրակը գցէր ... ոչ գըշերն ա քունս տանում՝ ոչ ցերեկը ... մէկ ուզում եմ խանըմին ասե՞մ, վախըմ եմ դուս անի ու համ նրա տեսից զրկւեմ՝ համ էլ իմ հայից: Աղից որ ուզի ճիպոտի պէս դողում եմ, վա՛յ թէ նա բռնել էլ տայ ... մնացել եմ երկու կրակի արանքումը կանգնած ...: Հրլա թող մի նորափեսէն գա՛յ, տեսնենք ինչ ա դուս գալի ... բանը բան չանց կը կտայ ... ընէնց էլ սիրուն ձէն ունի անիծածը, որ կասես չօլի բլբուլ ըլի ... թէ մի գլուխ կը գա՛յ, դու էն վախտը տես Թոմասի քէֆը ... (երգում է).—

Էս անտէր բարձի վրայ, լէ, լէ, լէ· լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ ...
Առանց եար քուն չի գալի,
Ո՞վ էր տեսել սիրած եարը մոռանայ,
Ով մոռանայ՝ ջուխտ աչքերով կուրանայ:

Հա՛, հա՛, վալլահ քօռանամ՝ թէ մոռանամ, ոնց կը մոռանամ ախը:



## ՏԵՍԻԼ Բ.

## ՆԸ և ՆԸՆԱԳԻԻԼ.

---

**ՆԱՆԱԳԻԻԼ**

(Ներս մտնելով եւ չանչելով) Քու տէրն էլ կասի՝ ախոռումը էշ ունեմ էլի ... ինչ վախտի խաղ ա, գեաղա ... էս ինչ օր ա որ ... վախտ ես գտել ...

**ԹՈՄԱՍ**

(Կողմը) Հը՛, ոնց ա, թխլիկ ա՞ թէ չէ ... (նրան) դարգերս միտքս են ընկել Նանագիւլ Ջան ... ինձ մի խօսացնի, թէ չէ՝ կը խռովեմ. (երգը շարունակում է՝ անընդհատ ակնարկներ ձգելով նրա վրայ):

Սև տղայ՝ սիպտակ աղջիկ, վայ լէ ալն,
Բռնել էք իրար եախա ...

**ՆԱՆԱԳԻԻԼ**

(Ընդհատելով) Սա հէնց իր էշն ա քըշում ... (նրան) գեաղա չես իմանում ...

**ԹՈՄԱՍ**

Ո՞նց չեմ իմանում, (կողմը) ասա դու էլ իմանաս, թէ չէ մէնակ իմ իմանալով ինչ դուս կը գայ:

**ՆԱՆԱԳԻԻԼ**

Դէ եաւաշ խանումը գա՛յ ...

**ԹՈՄԱՍ**

Հոգուտ մատաղ բան չասես. էս ա գալիս եմ ... (կողմը) իմ խանումը դու ես ... (նրան) արևս ու ումբրս քէ դուրբան ... ասա ինչ կայ անելու՝ էն սհաթը անեմ ...: Դու խանըմի պէս ձեռներդ ծալի, ղրաղ կանի, Թոմասի Ջանը դուս գայ՝ թող չարչարուի, թող հոգին դուս

գայ (կողմը) քեզ հըմար ... (նրան) հը՞, ինչ կայ անելու, ասա ... քու դուլլուղին կաննած եմ:

ՆԱՆԱԳԻԻԼ

Ինչ կայ ոըն ա ... հաղար բան ... բոլոր օթախները պըտի սրբուի, որ իրիգունը հազիր ըլի, հո գիտես, որ փեսէն գալիս ա ... էս քանի վախտ ա՝ թամբալացել ես խստակ ...

ԹՈՄԱՍ

Թամբալացել եմ ... դուզ ա, դուզ ա, Նանագիւլ Ջան ...

ՆԱՆԱԳԻԻԼ

Չէ մի սուտ ա ...

ԹՈՄԱՍ

Դուզ ա, ասում եմ, է՞ ... (կողմը) սարաբն էլ հարցնե՞ս, սմբուլ Ջան (երգում է).

Ալ ու ալուան ես հագել
Կարմիր լալա ես դառել (2)
Աղջիկ Ջան, քեզ դուրբան } 2
Իմ գիւմանը դու ես դու: }

ՆԱՆԱԳԻԻԼ

Էլի՞ ... (կողմը) դէ արի գէլի գլխին աւեսարան կարդա, քեար կանի՞ որ. ... (նրան) էդ ոըտեղ ես խմել, գեադա:

ԹՈՄԱՍ

Թօբա՜ ... էդ մէկը հոգուդ մեղք արիր ... ես ԷՐԸ եմ խմում, Նանագիւլ Ջան ... խմած չեմ, համա ...

ՆԱՆԱԳԻԻԼ

Թէ խմած էլ չես՝ չարաբի պէս ես:

ԹՈՄԱՍ

Ոնց որ մոլորուածը՞:



ՆԱՆԱԳԻԻԼ

Հա՛, հա՛ ... էշը կորցրածի պէս, էլի:

ԹՈՄԱՍ

Դուզ ա ... դուզ ... զորթ ա ... աո, դու բանից խաբար չես, էշս էլ եմ կորցրել՝ հրլա քուռակն էլ հետը ... դուզ ա, ասում եմ, Նանագիւլ Ջան, է՞ ... դուզ ա ... քու արևը դուզ ա ... վալլահ ըսէնց ա:

ՆԱՆԱԳԻԻԼ

Բաս քու ճարը ինչ պըտի ըլի ...

ԹՈՄԱՍ

(Խորը հոգւոց հանելով՝ կողմը) Իմ ճարը՞ ... ա՜խ ... իմ ճարը ... էն ա հասկացի էլի ...:

ՆԱՆԱԳԻԻԼ

Ասա, է՞, ինչ ես ախ քաշում:

ԹՈՄԱՍ

(Սթափուելով՝ նրան) Ի՞նչ ասեմ ... (կողմը) ախր ամաչում եմ, ելեսս չի բանում ...

ՆԱՆԱԳԻԻԼ

Ի՞նչ:

ԹՈՄԱՍ

Ըսկի ... մի բան հարցնեմ Նանագիւլ:

ՆԱՆԱԳԻԻԼ

Ասա տեսնեմ, ինչ ես ասում:

ԹՈՄԱՍ

(Փպտախառն) Տեսնես էս նոր եկող փեսէն էլ էշը կորցրած կըլի՞:

ՆԱՆԱԳԻԻԼ

(Ծիծաղով) Ամեն մարդ Թոմաս հո չի՞, ինչ ես սարսաղ սարսաղ դուս տալի:

*

ԹՈՄԱՍ

Վալլահ, Նանագիլ Ջան, հէսաբով սաւահի էշն ու քուռակը՝ նօխտէն էլ հեռը պըտի կորցրած ըլի, ինձանից բէթար։

ՆԱՆԱԳԻԻԼ

Ադա գժուել հօ չեմ ... եաւաշ բարիշնին ասե՛մ ...

ԹՈՄԱՍ

Ամա՛ն, Նանագիլ Ջան. ոտիդ տակի հողն ըլնեմ ... խաբարբղանութիւնը լաւ բան չի ... արխալուղս յետ կառնի։

ՆԱՆԱԳԻԻԼ

Աչքդ էլ կը հանի ... բաս խելօք կենա՞ս ...

ԹՈՄԱՍ

(Կողմը) Թողում ես ախը՞ր (նրան) խելօք եմ, խելօք, Նանագիլ ... (մտածելով) դրուստ, Նանագիլ, բաս քեզ բարիշնէն ոչինչ փէշքաշ չի արել։

ՆԱՆԱԳԻԻԼ

Ո՞նց չէ։

ԹՈՄԱՍ

Ի՞նչ։

ՆԱՆԱԳԻԻԼ

Մի նախշուն դէյրացու, մին էլ գլխի մի կարմիր աղուս ... հըլա էլի պըտի բան տայ ... եաւաշ պսակուելու օրը գա՞յ ...

ԹՈՄԱՍ

Ես էլ հէնց դրան եմ մնում ... ասըմ եմ մի բան էլ բալի փենէն տայ ինձ, խելքդ ինչ ա կտրում։

ՆԱՆԱԳԻԻԼ

Աւատա, որ տայ. բաս էդ ադիդ օրն էլ որ փէշքաշ չը տայ՝ էլ որ օրն ա՛ տալու, ինձ էլ կը տայ ու քեզ էլ։



ԹՈՄԱՍ

(Կողմը) Վայ ես քու բերանը կծեմ ... (Նրան) եարաբ մեր բարիշ՝ նէն քանի տարեկան կըլի, Նանագիլ։

ՆԱՆԱԳԻԻԼ

Ես ի՞մ ...

ԹՈՄԱՍ

Է՛լի հէնց, խելքդ ինչ ա կտրում։

ՆԱՆԱԳԻԻԼ

Աւատա երեսունը անց ըլի։

ԹՈՄԱՍ

Ո՞ւֆ ... էդ հօ քաւթառել ա։

ՆԱՆԱԳԻԻԼ

Բաս փեսէն ... ասըմ են քառասուն տարեկան ա տնաքանդը։

ԹՈՄԱՍ

Է՞Է՞ ... դէ ասա պապիս թոյն ա, էլի, մի ոտը գերեզմանում ... փառք Աստու, ես հըլա ջահել եմ ... երնէկ իմ նշանածին։

ՆԱՆԱԳԻԻԼ

Եանի քանի՞ տարեկան ես որ։

ԹՈՄԱՍ

Տասնութը, քանի՞։

ՆԱՆԱԳԻԻԼ

Էդ ա ջահելը՞։

ԹՈՄԱՍ

Բաս ինչ ա, թէ ջահել չի, բաս քու թոյն եմ։

ՆԱՆԱԳԻԻԼ

Ես քանի՞ եմ որ։

ԹՈՄԱՍ

Քսան, քսանհինգ կըլես ինչ։

ՆԱՆԱԳԻԻԼ

(Զանչելով) Ըհը, վայը քո բերսդի հալին։

ԹՈՄԱՍ

Ի՞նչ ա, սուտեմ ասո՞ւմ։

ՆԱՆԱԳԻԻԼ

Տասնուչորս, որ ասես, կը սխալւես։

ԹՈՄԱՍ

Չէ, Նանագիւլ Ջան, սուտ մի ասի ... ես գիտեմ քանի՞ տարեկան ես։

ՆԱՆԱԳԻԻԼ

Քանի՞։

ԹՈՄԱՍ

(Ցանկարծ) Տասնուվեց (ձիծաղելով) հը, հը, հը ...

ՆԱՆԱԳԻԻԼ

Էդ մնց գտար։

ԹՈՄԱՍ

Ո՞նց գտա՞յ ... մարդդ տամ ասա ... իմասաունի՞ պէս ... իմ ու քու հաշը իրար խառնեցի՝ հալալ կէս արի՝ ու գտայ ...։ Ըստուց եղը, Նանագիւլ, արի մենք երկուսս ինչ որ ունենք՝ հալալ կէս անենք, կէսն ինձ՝ կէսը քեզ։

ՆԱՆԱԳԻԻԼ

Չէ, ձին գլխիդ քացով ա տուել։

ԹՈՄԱՍ

Վալլահ ըսէնց լաւ կըլի ... հաւաչ հըլա, Նանագիւլ, էս գըշեր երազումս ի՞նչ տեսնեմ, որ լաւ ըլի։



ՆԱՆ.

Ի՞նչ։

ԹՈՄ.

Եա՞նի թէ՝ ըսի, էս օթախումը նստած, թաղա փեսէն ու բարիշնէն, երկսով մի բրեղանից գդալիսիս անելով հում սերով մածուն ին ուտում ... ես ու դու էլ հեռու կանգնած թամաշա ինք անում ու ...

ՆԱՆ.

(Ընդհատելով) Բերանները թուքը կուլ տալի էլի։

ԹՈՄ.

Հա՜ ... դուն էլ տեսար ... վալլահ դուն էլ ես ինձ պէս իմասաուն։ Մեզ որ տեսան՝ երկսով բիրդան մի գդալ ու մի քրեղան էլ մեզ տուին, որ մենք էլ գդալիսիս անելով ուտենք։ Էն սահաթը ես ու դու մածունը բրդեցինք՝ ընկանք Ջանին։ Օրհնած գդալը էլ հո դադար չունէր, մէկ իմ բերանն էր մանում, մին քո բերանը ... իմ լպստածը դու իր լպստում՝ քու լպստածը ես։

ՆԱՆ.

Սուս, սուս, ձէնդ կտրի, ամօթ ա։

ԹՈՄ.

Ի՞նչ ամօթի բան կայ ... մածուն ուտելը ամօթ ա՞ ... ընէնց համով էր ա՞ր ... սաղ քրեղանը լաւ լաղաթին դարդակեցինք։ Հըմի, Նանագիւլ Ջան, երազը բարին կատարի, արի հանաքը չը հանաք անենք։

ՆԱՆ.

Ի՞նչ անենք։

ԹՈՄ.

(Կողմը) Թամամ ախմախ ա. (Նրան) մածուն ուտենք։

ՆԱՆ.

Ուտում ես՝ կեր ... ես իշտահ չունեմ։

**ԹՈՄ.**

(Կողմը) Հէ՜ ... հրլա երեխայ ա. (Նրան) ես իշտահդ բաց կանեմ:

**ՆԱՆ.**

Հեմ ուզում:

**ԹՈՄ.**

(Կողմը) Հօռ ու ցաւ ուզես, չէ՜, կուզես, կը կակղես՝ կուտես. (Նրան) եանի ասում եմ ուզես՝ թէ չէ ...

**ՆԱՆ.**

Թէ չէ ինչ:

**ԹՈՄ.**

Թէ չէ ոչինչ, ինչ պըտի ըլի որ, կը փոշմանես ... փեսից ու բարեկինից, եանի, ասըմ եմ, եդ չը մնանք:

**ՆԱՆ.**

Ի՞նչ, ինչ, ինչ ...

**ԹՈՄ.**

(Կողմը) Ջան, ջան, ջան ... (Նրան) մենք էլ նշանուենք:

**ՆԱՆ.**

(Լացակումած) Ես քեզ նշանուել խրատ կը տամ ... եաւաշ մէկ խանըմը գա՛յ ...

**ԹՈՄ.**

(Ցանկարծ) Վա՛յ, լեզուս պասանձուի, էս ինչ արի տո՜ ... (Նրան) հանաք եմ անում, հանաք, Նանագիւլ ջան ... ձէնդ կտրի:

**ՆԱՆ.**

Հա՜, ձէնդ կտրի ... դու իմ վայը տաս՝ թէ չասեմ. եաւաշ մի գան ... կատաղել ես ... (Լաց լինելով դուրս է գնում):

**ԹՈՄ.**

(Դէպի Նանագիւլի դուրս գնացած դուռը), Մեղայ Աստու, Նանագիւլ



ջան, մեղայ Աստու: (Ցետ դառնալով) Տօ ինչ մեղայ Աստու ... սուս էք՝ որ ճանս ալչու ա կանգնելու ... որ լաց ըլաւ՝ իմացի ուզում ա: Հեմ ուզում՝ ջէրս գցի ... չէ՜ ... կը կակղի՝ մածունը կուտի: Օ՜վ՜վէ՜ ... անջախ սիրտս բաց արի ... էս ինչ դժար բան ա ըլել տո՜ ... ըստուց եդը դու ինչ ուզում ես՝ արա. խանըմը ինձ ինչ պըտի անի որ, մորթելու ա թէ կախելու: (Աչքն ընկնում է պատի ժամացոյցին), վա՛յ, քօռանամ ես ... սըհաթի իրեքն ա ... ախը ինձ ասել են շուտ եդ դաւի բաղաը, որ էլի բան ման կայ բերես ... էս ա իմ եդ դառնալը՞ ... (դրսում կառքի ծայն է լսում. լուսամուտից նայում է դուրս. կառքի ծայնը կտրում է), ֆայտոնը կանգնեց, անունը տուր՝ փէտը վեկալ ... նրանք են. եկան ... եկան՝ լաւ եկան (նայում է) ֆայտոնն էլ լիքը ... հը՞, ինչ անեմ հըմի ... էլ ինչ պըտի անեմ (լսում է ելեքտրական զանգի ծայնը) գալիս եմ, գալիս ... գնամ կապոցները վեր բերեմ, թէ չէ ձեռներիցը չեմ պրծնի. (դուրս գալիս դրան մէջ հանդիպում է Նանագիւլին, որ լաց լինելով՝ ներս է գալիս):

## ՏԵՍԻԼ Գ.

## ԹՈՄԱՍ և ՆԱՆԱԳԻՒԼ.

---

**ԹՈՄ.**

(Կողմը) Ըհը՜, աչքս լոյս ... իմ նեղ մաջալին՝ էս էր պակաս ... բանը պըտի խարաբ անի, (Նրան) հը՞ ... ի՞նչ ես պարկապզուկդ քօքել, աղջի, ամօթ չի՞:

**ՆԱՆ.**

Հա՜, ամօթ ա ... եաւա՜շ ... հըմի հօ եկան ... ես քեզ մածուն ուտել խրատ կը տամ:

**ԹՈՄ.**

Սուս, սուս. աչքերդ սրբի, ամօթ ա, մարդու բան չասես, թէ չէ ...

**ՆԱՆ.**

Թէ չէ ի՞նչ որ ...

**ԹՈՄ.**

Թէ չէ՝ ինձ էլ, քեզ էլ դուս կանեն. վայլահ դուս կանեն, հըմի դու գիտես, ես գնացի ... (շտապով դուրս է գնում):

## ՏԵՍԻԼ Դ.

## ՆԱՆԷԳԻԻԼ, ՄԻՆԱԿ.

Դուս կանեն ... ընչի՞ ... ես ի՞նչ իմ արել որ ... դուս անելուն ինքն ա թէ ես ... ընչի՞ չի դադար կենում ... խեղճ աղջիկ ա գտել հա ... (դրսում լսւում է Նուարդի եւ Պայծառի բարկացած ձայները «անպիտան», «անշնորհք», «դուրս անելու ես» եւն): Դէ գնա հըմի ջուղաբը տուր, հըմի կը տեսնեք, թէ ում դուս կանեն, ինձ թէ քեզ ... սրանից եղը գնա էնքան մածուն կեր՝ որ քթիցդ դուս գայ:

## ՏԵՍԻԼ Ե.

## ՆԱ, ՆՈՒԱՐԴ, ՊԱՅԾԱՌ և ԹՈՄԱՍ.

**ԹՈՄ.**

(Երկու ձեռքով երեք չորս կապոց բռնած, մի բանի կապոց էլ թեւերի տակ առած՝ ներս է գալիս. յետեւից մտնում են Նուարդն ու Պայծառը.—



կողմը՝ գլուխը թափ տալով) Վայ Աստուած ձեր գիւանն անի ... էս ի՞նչ ծանը ա աց ... կռներս թափեցին ... ուֆ ...

**ՆՈՒԱՐԴ**

Հը՞, ինչ ես կուզդ դուրս գցել, նօթերդ կիտել, քու բոյը թաղեմ ես ... ծանը է ... հոգիդ դուրս գայ. տանը մնալը թեթեւ է, չէ, անշնորհք ծոյլ ... անականջ վայրենի:

**ՊԱՅԾԱՌ**

Տուածս ընծան քթիցդ պիտի հանել՝ որ խելքդ գլուխդ հաւաքես, որ ինչ ասում են՝ լսես, կատարես, որ կողքիդ չընկնես ու անհոգ քնես, որ տուած հրամանները մի ականջովդ չը մանի՝ միւսովը դուրս գայ, գոթի, բռի, կոպիտ ...

**ՆՈՒԱՐԴ**

Ախը ինչ քո բանն է ծառայութիւնը ... քոնն էն է, որ մի սուրու խոզ տան՝ տանես արածացնես, ինքդ էլ նրանց հետ քնես, վեր կենաս, սաղ օրը կեղտի մէջ գլորուես ... դու արժանի ես, որ այսպէս մաքուր սենեակներում կենաս, մարդու պէս ապրես:

**ՆԱՆ.**

(Կողմը) Օխա՜յ, էլ հըմի կեր մածունը:

**ԹՈՄ.**

(Կողմը) Տեղն ա ինձ, ասէք, ասէք ... (Նրանց) ես գլուխս քարովը տուի, խանում, էլ չեմ անի ... սրանք ոբտեղ գնեմ. (կողմը) կռներումս հալ չը մնաց:

**ՆՈՒԱՐԴ**

Ո՛չ մի տեղ չը պէտք է գնես ... այդպէս մի սահթ պէտք է կանգնես, որ հոգիդ դուրս գայ, որ խրատուես վերջապէս:

**ՊԱՅԾ.**

Հա, այնքան պէտք է կանգնես՝ ինչքան մեզ դուքանումը կանգնացրել ես:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Ից ՍՍՌ
Գ. Մ. Ա. Մասիսյանի
անվան

ՆԱՆ.

(Կողմը) Էդ հրլա քիչ ա:

ՆՈՒԱՐԴ

Ոը խելքդ գլուխդ գայ:

ՊԱՅԾ.

Ոը միւս անգամ ասած խօսքը չը մոռանաս:

ԹՈՄ.

(Գլուխը տարուբերելով) Չեմ մոռանայ, բարիշնա, (կողմը) էսքանով պրծնեմ լաւ ա, ռազի եմ. դու ասա տակից ուրիշ բան դուս չը գայ. (Նրանց) էս մի անգամը բաշխէք, էլ չեմ անի:

ՆՈՒԱՐԴ

Չէ, չէ, պէտք է կանգնես:

ՊԱՅԾ.

Զորանաս, որ հասկանաս ... շնորհակալ չես, որ այդքանով ես պրծնում ... քեզ դուրս անելն էլ դեռ քիչ է:

ԹՈՄ.

Կանգնեմ, խանում, թէկուզ երկու օր կանգնեմ, երեք օր, ջանս դուս գայ՝ կանգնեմ, ամա (կողմը) դու ըլես քու մեռելներու ազիզ հոգին՝ դուս անելու անունը մի տայ, թէ ես եմ մեղք՝ թէ ...

ՆՈՒԱՐԴ

Ի՞նչ ...

ԹՈՄ.

Ոչինչ, խանում, ինչքան ուզում ես՝ կանգնեմ:

ՊԱՅԾ.

Անշարժ, քարի պէս ... տեղը չի դրան, Նանագիլ ...

ՆԱՆ.

(Սկսում է հեկեկալով լաց լինել), Հրլա քիչ ա ... գետինը մանի դա ... գրողը տանի դրան ... (լացը շարունակում է):



ՆՈՒԱՐԴ

Սա ինչու է լաց լինում:

ԹՈՄ.

(Կողմը) Դու էիր պակաս ... պարկապզուկի բերանը բացուեց, հրմի երկու սրհաթ կանգնելուն էլ եմ ռազի:

ՊԱՅԾ.

(Նանագիլին) Ի՞նչ պատահեց քեզ, աղջի: (Նանագիլը հետզհետէ լացի ձայնը բարձրացնում է):

ՆՈՒԱՐԴ

(Կողմը) Մի բան կայ անպատճառ ... չը լինի՞ թէ ... (Նրան) հիւանդ հօ չես, Նանագիլ:

ՆԱՆ.

(Լացը աւելի եւս սաստկացնելով), Չէ հիւանդ չեմ ... ես չեմ մնում, ես գնում եմ ... (լացը շարունակում է):

ՊԱՅԾ.

Ո՞ւր, ինչի՞, ի՞նչ է պատահել:

ՆՈՒԱՐԴ.

Ինչու ես լաց լինում ախը է՞ ...

ՆԱՆ.

(Ցոյց տալով Թոմասի վրայ) Այ, հարցրէք, թէ երես ունի՝ կասի, դրբա ումբրը խաւարի, (շարունակում է լացը):

ՆՈՒԱՐԴ

Ո՞ւմ հարցնեմ, Թոմասի՞ն:

ՆԱՆ.

(Փղձկալով) Հա ...

ՊԱՅԾ.

(Կողմը) Չէ՞, այստեղ անպատճառ մի բան կայ:

**ԹՈՄ.**

(Կողմը) Ասա ինձ ինչու հարցնեն, աս, գեսին մտած, ասում ես՝ ասա էլի։

**ՆՈՒԱՐԴ**

(Թոմասին) Ադա, Նանագիուլը ինչու է լաց լինում։

**ԹՈՄ.**

Նա որ չի կարում ասի՝ ես ինչ ասեմ, ես ինչ գիտեմ ինչու ա լաց ըլում։

**ՆՈՒԱՐԴ**

Ծեծել հո չեմ։

**ԹՈՄ.**

Վայ չէ, չէ, խանում, կանաչ մեռոնը վկայ՝ չէ, ձեռներս կը կոտրուի ... ինքն էլ կասի, որ չէ ... արա ես կը զըմբշեմ։

**ՆՈՒԱՐԴ**

Բաս ինչու ես լաց լինում, աղջի։

**ՆԱՆ.**

(Լացակումած) Ասում ա արի մածուն ուտենք, (շարունակում է լացը)։

**ՊԱՅԾ.**

(Ծիծաղելով) Ո՞նց թէ մածուն ուտենք։

**ԹՈՄ.**

Եաւաշ ինչ փիս բան եմ ասել որ, բարիշնա ... մածուն ուտելը ամօթ ա։

**ՆՈՒԱՐԴ**

Ասաց՝ դու էլ կուտէիր էլի։

**ԹՈՄ.**

(Կողմը) Ողորմի քու հօրը. (Նուարդին) թէ ամօթ բան ա՝ ընչի ին բարիշնէն ու նորափեսէն ուտում։



**ՊԱՅԾ.**

Ո՞վ, ես, երբ, աս անշնորհք, մեղ դու երբ ես տեսել մածուն ուտելիս։

**ԹՈՄ.**

(Կէս ծիծաղ) Երազումս ի տեսել, բարիշնա ... էդ երազն ա, որ ասըմ ա։

**ՆՈՒԱՐԴ**

Ոչինչ չեմ հասկանում։

**ՆԱՆ.**

Հա ... երազն ա մէնակ (լացախառն ձայնով)։

**ՊԱՅԾ.**

Էլ ուրիշ ինչ կայ որ։

**ՆԱՆ.**

(Թոմասին) Դու չէիր ասում, թէ արի փեսից ու բարիշնից եղ չը մնանք, արի մենք էլ նշանուենք (լացը շարունակելով)։

**ՊԱՅԾ.**

(Թոմասին) Հա ...

**ՆՈՒԱՐԴ**

(Թոմասին) Հա, աս գեսին մտած ...

**ԹՈՄ.**

(Կողմը) Ասենք, թէ հա ... էլ ինչու գեսինը մանեմ ...

**ՆՈՒԱՐԴ**

(Թոմասին) Պապանձուել ես, խօսիր է ... էդպէս բան ասել ես։

**ԹՈՄ.**

Հա, խանում, չէի ուզում ասի, ամա բիրդան բերանիցս դուրս պրծաւ, սատանէն ասել տուեց. (Նանագիլին) ընչու թամամ չես ասում, եղոյ էլ չասի, որ հանաք եմ անում։

ՆՈՒԱՐԴ

Ուղիղն ինձ ասա, խոկապէս հանաք ես արել, թէ ...

ԹՈՄ.

Հանաքը՝ հանաք ի անում, խանում, ամա որ կամք տար, կարելի ա, որ հանաքը չը հանաք անէի։

ՆՈՒԱՐԴ

Ակ դու եարամազ ... այժմ դու ինձ ուղիղն ասա, Նանագիւլին, որ քեզ տանք, կուզես։

ԹՈՄ.

Իմ բանը հեշտ ա, խանում, առաջ Նանագիւլին հարցրու, թէ Թոմասին որ իրան տաք, կուզի։

ՊԱՅԾ.

(Կողմը) Տեսնում էք ինչ խորամանկն է ...

ՆՈՒԱՐԴ

Ա՜յ դու դարմանի տակի ջուր։

ՊԱՅԾ.

Դու ինչ ես ասում Նանագիւլ, կուզես։ (Նանագիւլը լաց է լինում)։

ՆՈՒԱՐԴ

Լաց մի լինի, Նանագիւլ ջան, ասա, մի ամաչի ...

ՊԱՅԾ.

Փեսէն ինձ ուզելիս՝ ես էլ լաց եղայ, բայց սրտով ուզում էի ... թէ դու էլ ինձպէս ես լաց լինում, ամաչելու բան չը կայ, մի քաշուի, ասա։

ՆՈՒԱՐԴ

Դու հօ լաւ գիտես, որ ես քեզ մօր պէս եմ սիրում, դու իմ աղջիկն ես ... թէ չես ուզի՝ էս օրուանից ես Թոմասին դուրս անեմ,



որ այսուհետև նրա երեսը ոչ մենք տեսնենք՝ ոչ դու. (Նանագիւլը լաց է լինում)։

ԹՈՄ.

(Կողմը) Ի՜նչ ... կասես սիրտս ղընկղընկում ա, կասես նեղաբերան փարչից պըլըտտ, պըլըտտ, ջուր ա կաթկաթում սրտիս մէջ, Նանագիւլ, ոտիդ տակի հողն ըլնեմ, դու ու քո Աստուածը։

ՊԱՅԾ.

Դէ ասա, Նանագիւլ, կուզես, թէ չէ։ (Նանագիւլը լաց է լինում)։

ՆՈՒԱՐԴ

Թէ կուզես՝ լաւ ժամանակ է, ասա, բանը վերջացնենք, բարիշնիդ հետ իմ հաշուով պսակեմ, քեզ համար էլ բաժին ք առնեմ. (Նանագիւլը լաց է լինում)։

ԹՈՄ.

(Կողմը) Դէ ասա հա, էլի, տնաքանդ, ինչ ես բոչի պէս լաց ըլում։

ՊԱՅԾ.

Թէ ամաչում ես՝ գլխով արա՝ մենք կը հասկանանք. (Թոմասը աչքերը չոում է դէպի Նանագիւլը եւ ինքն իրան գլխով անում)։

ՆՈՒԱՐԴ

Ասա, աղջիկս, մի՞ քաշուի, Թոմասը լաւ տղայ է, քեզ լաւ կը պահի, իմ ու աղիդ աչքն էլ ձեզ վրայ միշտ քաղցը կը լինի ... էլի մեզ մօտ կը մնաք, մի վախի, մեր նեբքեի երկու սենեակը ձրի կը տամ ձեզ ապրելու ...

ԹՈՄ.

(Կողմը) Այ բերանդ ուտեմ, խանում ջան ..., բերանդ։

ՊԱՅԾ.

Հը՜, հիմի կառնես թէ չէ։

ՆԱՆ.

(Կիսալաց ձայնով գլխով համաձայնութեան նշան է տալիս)։

ԹՈՄ.

(Ձեռքի եւ թեւերի տակի կապոցները յանկարծ վայր է թափում)։ Ո՜ւֆ, անջատ։

ՆՈՒԱՐԴ

Է՜հ, Աստուած շնորհաւոր անի։

ՊԱՅԾ.

Խելօք պահի և մի բարձի ծերացնի.

ՆՈՒԱՐԴ

Ծլիք, ծաղկիք, զօրանաք, աղջի, արի ձեւս պաչի (Նանագիւլը մօտենում համբուրում է Նուարդի ձեռքը)։

ԹՈՄ.

Բարիշնի ձեռքն էլ (երկսով էլ համբուրում են նրանց ձեռքերը)։

ՆՈՒԱՐԴ

Շատ ապրիք, դէ հաւաքէք այդ բաները, տարէք իմ սենակը, այսուհետև ականջդ վրէդ կը պահես։ Որտեղ որ է՝ նորափեսէն ապի հետ կը գայ, երբ որ տուն եկաւ՝ երկուսով էլ կը գաք՝ ձեռքը կը պաչէք, իմացա՞ք։

ԹՈՄ.

Մեր աչքի վրայ, խանում, (հաւաքում՝ դուրս են գնում)։

---



## ՏԵՍԻԼ Զ.

## ՆՈՒԱՐԴ և ՊԱՅԾԱՌ.

---

ՊԱՅԾ.

Ախ, ինչքա՜ն ես բախտաւոր եմ, մայրիկ (նայելով պատի ժամացոյցին), ժամի 4-ն է արդէն. գնացքը քանիսին է գալիս ...

ՆՈՒԱՐԴ

Հորս և կէսին, էլ ժամանակ կորցնելու չի։ Գնա համ շորերդ հագիր, համ էլ Թոմասին ու Նանագիւլին բանի դիր, նրանց էն ժամանակն է այժմ, որ մէնակ թողնես՝ ոչինչ չեն անի ... պակաս բան չմնայ, ամօթ է։

ՊԱՅԾ.

Ո՞ր շորերս հագնեմ, որ լաւ լինի։

ՆՈՒԱՐԴ

Որն էլ հագնես՝ դուրը կը գայ, բոլորն էլ նոր են։

ՊԱՅԾ.

Ախ, ուրքա՜ն ես երջանիկ եմ, մայրիկ, կարմիրը կը հագնեմ։

ՆՈՒԱՐԴ

Հագի՜ր ...

ՊԱՅԾ.

Չէ, կապոյտը, կապոյտը ...

ՆՈՒԱՐԴ

Դու գիտես։

ՊԱՅԾ.

Կէս ժամ էլ՝ և նա այստեղ կը լինի, ա՜խ, ուրքա՜ն ես բախտաւոր եմ ... կրեմ գոյնը լաւ չէ, մայրիկ։

*

ՆՈՒԱՐԴ.

Լաւ է՝ կրեմ գոյնը հագիր:

ՊԱՅԾ.

Ռոզովի տալասը՞ ինչպէս:

ՆՈՒԱՐԴ

Օ՜ֆ, դու գիտես:

ՊԱՅԾ.

Ա՜խ, որքան ուրախ եմ, սիրաս թռթռում է ... չը գիտեմ ո՞ր հագնեմ է՞, մայրիկ:

ՆՈՒԱՐԴ

Որը կուզես՝ հագիր էլի, աղջի:

ՊԱՅԾ.

Լիլովին հագնեմ:

ՆՈՒԱՐԴ

Մի բան հագիր վերջապէս:

ՊԱՅԾ.

Արի սէրիյ գլասը հագնեմ, մայրիկ:

ՆՈՒԱՐԴ

Օ՜ֆ, գնա, գլուխս մի տանի. ինչ ուզում ես՝ հագի:

ՊԱՅԾ.

Վարդագոյնը կը հագնեմ, մայրիկ ջան, վարդագոյնը, դէկադենտսկին, մեծ ծաղիկներովը:

ՆՈՒԱՐԴ

Օ՜ֆ, ձանձրացայ, գնա բոլորն էլ իրար վրայ հագիր, պրծա՞նք:

ՊԱՅԾ.

(Համբուրելով մօրը) Մի նեղանա, մայրիկ ջան, ա՜խ, որքա՜ն ուրախ եմ ... ասում եմ քու սրտովը լինի, թէ չէ ... (դնում է):



## ՏԵՍԻԼ Է.

### ՆՈՒԱՐԴ, ՄԻՆԱԿ.

---

Իմ սրտովը լինի ... կարծես ես եմ պսակուողը ... իմ սրտովը որ լինէր՝ ես քեզ կը տայի Թոմասի պէս մէկին, որ ոչ դէկադէնտսկին լինէր լսած, ոչ մեսադենտսկին ... բանդուեցինք խստակ, բանդուեցինք. (ձեռքը բկին տանելով) ըհրն, մինչև այստեղ խրուել ենք ... բաղաղների աչքը լոյս. ոնց ենք դուրս պրծնելու այդքան պարտքի տակից՝ մնացել եմ շւարած: Տասներկու դէրիյէն ինչին հէրիք չէր, որ վեցն էլ այսօր աւելացրեց: Բաս միւս բաները՞—սփռոցներ, ճերմակեղէններ, երես սրբիչներ, բարձեր, վերմակներ, գորգեր, կօշիկներ, նասկիք, շլեապաներ, շուբ ու նակիտկաներ, ձեռնոցներ, քանի՞ տեսակը, քանի՞ գոյնի կուզես. բաս արծաթեղէնն ու ոսկեղէնը՞ ... սաղ լինի «գրի վրէս-ը». ինչ վերցնում ես՝ գրի վրէս. մի օր պիտի վճարենք թէ չէ: Երանի՜, հաղա՜ր երանի մեր Թոմասին ու Նանագիւլին, ոչ գրի վրէս ունեն՝ ոչ հոգս ու դարդ, ոչ պարտք ու ցաւ, ոչ պահանջ ու պէտք. մէկը մի չուխով ու արխալրխով՝ միւսը մի գլխի աղլրխով ու կարմիր չթի դէյրով գոհ են ու երջանիկ: Հալալ լինի իրանց մօր կաթի պէս ... բաս որ մենք աղա ու խանում ենք ու նրանք ծառայ ու աղախի՞ն, էդ քիչ բան է՞, (հեգնական ժպիտով) հը, հը, հը, ... այ քանդուի ու կործանուի ձեր ուռումն ու լուսաւորութիւնը: Աղան ու խանումը մեր Թոմասներն ու Նանագիւլներն են, ականջներիդ բամբակը հանէք ... էս պսակ է՞, ձեզ եմ հարցնում. աղջիկը 35-ն անց՝ փեսէն 50-ին մօտ, ինչի՞ համար են պսակւում, ո՞ւմ համար են պսակւում: Փեսէն դեռ 5000-ի վրայ է պսակւում, դու, Պայծառ, ... էհ, դու էլ քեզ ու ծնողներիդ աղատելու համար, որ փէշերդ փէշներիս կարած հետներս գերեզման չը գաս ... խե՜ղճ աղջիկ ... «ա՜խ, ինչքա՜ն ես բախտաւոր եմ, մայրիկ» ... երանի՜ թէ այդպէս լինէր ... յոյսն էլ մեծ բան է: (Նայելով

ժամացույցին) Որտեղ որ է՝ պօեզդը կը գայ. ինչ արին՝ չը գիտեմ. ասա մէկն ու մէկը երևում է որ. (կանչում է) Թոմա՜ս, այ Թոմա՜ս ...

## ՏԵՍԻԼ Ը.

## ՆԱ և ԹՈՄԱՍ.

---

**ԹՈՄ.**

(Ներս գալով) Ըստի եմ, խանում:

**ՆՈՒԱՐԴ**

Ի՞նչ արիք, պրծա՞ք:

**ԹՈՄ.**

Վաղուց ենք պրծել, խանում:

**ՆՈՒԱՐԴ**

Սամօվարը՞ ... ընթրիքը՞ ...

**ԹՈՄ.**

Սամավարը քլթքլթում ա, խանում, իրիգնահացն էլ իր վախտին հաղիր կըլի, արխէին կաց:

**ՆՈՒԱՐԴ**

Դէ լաւ, այստեղ սպասիր, ականջդ ու աչքդ լուսամուտին պահիր, որտեղ որ է՝ աղէղ ու փեսէն պէտք է գան ... ես մի գնամ տեսնեմ, Պայծառն ինչ եղաւ: Գան թէ չէ՝ ինձ իմաց արա ... (գնում է):

## ՏԵՍԻԼ Թ.

## ԹՈՄԱՍ, ՄԷՆԱԿ.

---

Աչքիս վրայ, խանում: Օղորմի քու հօրն ու մօր հոգուն ... էսքան



վախտ աղի օթախումը Նանագիւլի հետ մէնակ ինք ... էնքան հոհոացինք ո՞ր, անհէտար ... չէի ասում կը կակղի կուտի ... (մատը ճակատին դնելով) իմաստուն եմ է՞, իմաստուն ... մին մին ըսէնց զոլթ-զատակից, թաքուն որ չէի խուտուտ տալի՞, վիրի իծի նման հինգ վեց հետ ծուլ ծուլ էր լինում ու դոշը հինգ օրական գառան դմակի նման գնում՝ գալիս էր՝ տըմբտըմբում. համ իմ դուրն էր գալի, համ իրանը ... (նայում է լուսամուտից դուրս) չէ, հրլա մարդ չը կայ: Գրուստա, էդ ինչ ա մեր բարիշնի դոշը, կասես չոր տախտակ ըլի ... ես ասեմ կերածը չի մարսում խեղճը ... ամէն օր կանիլէտ ա ուտում ... կանիլէտ ուտողն էլ էդքան լղար կըլի՞ ... մէջքը հօ ըհը (ցուցամատերն ու բոյթերը իրար կպցնելով՝ օդակ է կազմում), իմ Նանագիւլի մէջքից ըսէնց չորս մէջք դուրս կը գայ: Էն օրին ա խեղճը, որ փչես՝ վեր կընգնի, երեսի ռանգը հօ՝ սիպտակ կտաւը քեզ օրինակ, սփռթնած, չմշկած ... էն օրը գօխտուրն եկել էր, ասում էր ձկան եղ պըտի խմես, տօ մարդ էլ կովի արդար եղը թողած՝ ձկան եղ կը խմի՞ ... խելքս բան չի կտրում, աղբէր ... մի խօսքով Աստած իր նշանածին բաշխի: Ինձ ի՞նչ, ես իմ նաշխուն Նանագիւլի տէրն եմ, հաղար ըսէնց բարիշնի հետ չեմ փոխի ...: Աղջի, թէ՞ ասում իր մածուն չեմ ուտում, տեսա՞ր ոնց կերար ... ըստուց եղն, ասում ա, Թոմաս ջան, մածուն էլ կուտենք, սեր էլ, կարագ էլ ու թան էլ ... հա՛, հա՛, բօյիդ դուրբան, հէնց ինչ քէֆդ տայ՝ կուտենք ... ամա ինչ իրար ընկել ենք է՞ ... ես եթիմ՝ նա եթիմ, աղէն ու խանումն էլ մեր երկոխս հէրն ու մէրը ... Աստած սաղ պահի նրանց մեզ համար. (դուրսը կառքի ձայն է լսում), եկան, (նայում է դուրս), վալլահ եկան ... նրանք են ո՞ր ... հեռու են հրլա, լաւ չեն երևում ... (նորից դուրս նայելով), նրանք են, եկան, համա իրեք հոգի են, մէկը հրլա աղէն ա, մէկն էլ փեսէն ... բաս էն մինն ով ա ... (դուրս վազելով), խանո՜ւմ, աչքդ լո՜յս ...

## ՏԵՍԻԼ Ժ

## ՆԱ և ՆՈՒԱՐԴ.

ՆՈՒԱՐԴ

Հը՛, եկան ...

ԹՈՄ.

Եկան, խանում, դու երկու իր ասում, ամա իրեք հոգի են, խանում:

ՆՈՒԱՐԴ

Ո՞նց թէ երեք, դէ լաւ, լաւ, չուտ արէք, Նանագիւլի հետ գնացէք բան—մանը բերէք:

ԹՈՄ.

Էս սահաթիս, խանում (գնում է):

ՆՈՒԱՐԴ

Երեք հոգի են ... մէկն ով է տեսնես: (Դէպի Պայծառի սենեակը), աղջի չուտ արա, եկան ...

## ՏԵՍԻԼ ԺԱ.

## ՆԱ և ՊԱՅԾԱՌ.

ՊԱՅԾ.

(Ներս գալով) Պրծայ, մայրիկ, պրծայ ... (մօր ծեռքն առնում՝ իր կրծքին է դնում), տես ինչպէս է զցում ... երեսիս գոյնը հօ չի թռել, մայրիկ:

ՆՈՒԱՐԴ

(Կողմը) Ասա գոյն կամ, որ թռչէր, (նրան) չէ՛, չէ՛, շատ լաւ ես, քեզ մի կորցնի, հանգիստ կաց, հետը ուրիշ մարդ էլ կայ, գնա ներս սպասիր, յետոյ կը կանչեմ՝ կը գաս:

ՊԱՅԾ.

Ուրիշ ով կայ որ ...

ՆՈՒԱՐԴ

Չը գիտեմ, եկան. ներս փախի ... (Պայծառը ներս է գնում):

## ՏԵՍԻԼ ԺԲ.

## ՆԱ, ԳԵՐԻԷԼ, ՍԱՀԱԿ, ԿԱՄՍԱՐ.

Սրանց յետեւից Թոմաս ու Նանագիւլ՝ ծեռներին մի մի ճանապարհորդական զամբիւղ ու չեմօդան, հովանոց, գլխարկի արկղներ ու վերարկուներ:

ԳԱԲ.

Նուարդ Ջան, էս էլ քու փեսէն, սաղ, սալամաթ, քէֆը քօք, դամաղը չաղ, դեռ խաչեղբայրն էլ վրան վերադիր, պ. Կամսար Տէր Վարդանեան, ինքը հաշուապահ, տեղը չաղ, խոզէինն ախմախ (Կամսարին) այդպէս չէիր ասո՞ւմ ...

ՍԱՀ.

Հա, հա. հա, լաւ рекомендація էք անո՞ւմ ...

ՆՈՒԱՐԴ

Սրա հանաքները նոր էք իմանում, բարով, հազար բարի գայ, իմ աչքի, իմ գլխի վերայ տեղ ունի (համբուրում է Սահակի ճակատը, իսկ Սահակը նրա ծեռքը. Կամսարի հետ ծեռք ծեռքի են տալի):

ԳԱԲ.

(Նուարդին՝ ցոյց տալով Կամսարի վերայ), սրա հետ լաւ ծանօթացիր. մի աչքով մի մտիկ տուր սրան, լա՜ւ թիքայ է, հա, հա, հա ...

ՆՈՒԱՐԴ

Ի՞նչպէս թէ ...

ԿԱՄՍԱՐ

(Կողմը) Ի՞նչ է ուզում ասել ...

ԳԱԲ.

Աղապ է, աղապ, հա, հա, հա ...

ՍԱՀ.

Ի՞նչ անենք, որ աղապ է ...

ԳԱԲ.

Ոտքից գլուխ рекомендація, հա, հա, հա ... դու բանից պրծար, փեսա, այսուհետև քո երեսին մարիկ անողն ով է որ ... թէ մի աղջիկ էլ կունենար ... տեսնէիր ինչ էր շուլալում սրա եախէն ...

ՍԱՀ.

Ո՞վ, մայրիկը՞, հա, հա, հա, էդպէս շնորհք ունի, հա՜ ...

ԿԱՄՍ.

Դեռ վաղ է, վաղ, պ. Գաբրիէլ ...

ԳԱԲ.

Վաղը վաղ չի ասենք ... փեսա Սահակը դեռ չի իմանում ինչ ուստա զոքանչ ունի, օձն իր բնից կը հանի, ես ու իմ հոգին, (օձիքը թափ տալով) ով քեզ չի ճանաչում ...

ՆՈՒԱՐԴ

Դէ լաւ, լաւ, էլի չանէզ մի թուլացնի, հանաքի ժամանակ ես գտել ... այ անքաղաքավարի մարդ ... մէկ հիւրերիդ հրաւիրիր նստեն, քու աղբաթը խէր։

ԳԱԲ.

Երկուսն էլ տանու մարդիկ են, ինչ հրաւիրեմ, իրանց իրանց էլ



կը նստեն (Թոմասին ու Նանագիւլին) իրեղէնները տարէք իմ օթաղը, երես սրբիչ, տապոն պատրաստէք ... էս է գալիս են լուացուեն. (Թոմասն ու Նանագիւլը գնում են)։ Դու էն ասա, էս օրուան հերոսուհին մրն է, ռուսի ասած՝ виновница дня. (ցոյց տալով Սահակի վրայ) աչքերը ջուր կտրուեց է ...

ՍԱՀ.

Բաս ասում էք ուստա զոքանչ ունե՞մ ...

ՆՈՒԱՐԴ

Կը գայ, կը գայ, փեսա ջան ... դուք մի լուացուէք, պրծէ՛ք, տեսէք մնց կը գայ, բաս ինչ կանի որ չի գայ։

ԳԱԲ.

Օ՜օո՜, շատ ուրիշն ես ... լաւ է ասում ... գնանք, գնանք լուացուենք ... ուզում է ասել ուշ կը գայ՝ բայց նուշ կը գայ, չէ՞, Նուարդ։

ՆՈՒԱՐԴ

Բաս ինչ ես ասում որ ... ի հարկէ։

ԳԱԲ.

Տօ ես գիտեմ, գիտեմ ... փեսիդ հասկացրու, որ դեռ խամ է ... 40 տարուայ մէջ ես անջախ եմ ճանաչել քեզ, սա մնց ճանաչի, հեշտ բան է՞ ... (Նրանց) գնանք, գնանք, աղբէր (ընկնում է առաջ, որին հետեւում են Սահակն ու Կամսարը)։

## ՏԵՍԻԼ ԺԳ.

## ՆՈՒԱՐԴ, ՄԷՆԱԿ.

---

«Գ. Կամսար Տէր Վարդանեան, հաշւապահ, տեղը չաղ՝ խոզէինն պխմախ», հասկանալի է ... ախ, ինչ կը լինէր, որ մի երկու ամիս ա-

ռաջ ... ուշ է ... բանը բանից անց է կացել ... ավսո՛ս, շատ ավսո՛ս ... Էհ, Աստուած եղածն օրհնի ... բայց, ինչ կուզի լինի՝ էլի ճանկիցս չի դուրս պրծնի։

## ՏԵՍԻԼ ԺԴ.

## ՆՈ, ԳԱԲՐԻԷԼ, ՑԵՏՈՑ ՊԱՏԾԱՌ.

---

**ԳԱԲ.**

(Շտապ դուրս գալով սենեակից) Լսիր, Նուարդ, (ցույց տալով իր ննջարանի դուռը) չաղ կարմրախայտ է, մոլորուել է՝ մեր Ջուրն ընկել, թէ կարող ես՝ բռնիր, ջնակացրու, թողդ գցիր ... երկու կողմից էլ վարձք է ...

**ՆՈՒԱՐԴ**

Ես էլ հէնց նոր դրա վրայ էի մտածում ... ով կայ էնպէս, (մտածելով)։

**ԳԱԲ.**

Հեռու մի գնա ... հօրաքրոջս աղջիկն ինչ է։

**ՆՈՒԱՐԴ**

Հա, Եսթերը, լաւ ասացիր ...

**ԳԱԲ.**

Սաղացրու, էլի, վարձք է։

**ՆՈՒԱՐԴ.**

Իմ աչքի վրայ ... սաղացնեմ։ Ի՞նչ ես տալի ...

**ԳԱԲ.**

Ինչ ուզում ես, միայն չնորհդ ցույց տուր։ Կարգադրեմ, որ գայ։



**ՆՈՒԱՐԴ**

Թող գայ։

**ԳԱԲ.**

Այս բոպէիս. (ուզում է դուրս գնալ)։

**ՆՈՒԱՐԴ**

Դայ ... թող գայ՝ բայց հօրն ու մօր հետ։

**ԳԱԲ.**

Ինչու անպատճառ ...

**ՆՈՒԱՐԴ**

(Ընդհատելով) Էդ իմ բանն է ... հասկացրու իրանց, որ գան փեսի գալուստը շնորհաւորելու։

**ԳԱԲ.**

Շատ բարի, այդպէս էլ կը գրեմ. (գնում է)։

**ՆՈՒԱՐԴ**

Վարձք է, ասում է ... բաս իմ օգուտը, բաս քու խէրը՞ ... էլ չի իմանում, որ հօրաքրոջ մարդու գուրքանից էս օր 500 մանէթի ապրանք եմ բերել իր աղջկայ բաժինքի համար ու մի կոպէկ փող չեմ վճարել. էս օր էգուց էդ հաշիւը ինքն է վճարելու, մը տեղից ... մինչև 500-ի վրէն 500 կամ աւելի չառնեմ՝ բաս ես իմ հօր աղջիկը չեմ, դեռ մի մունաթ էլ վրաները գամ ...։ Սաղացնեմ, իմ աչքի վրայ ... (Գաբրիէլը ներս է գալի), հը՞, ուղարկեցի՞ր։

**ԳԱԲ.**

Ուղարկեցի։

**ՆՈՒԱՐԴ**

Դէ մնացածը թող ինձ, ես գիտեմ՝ ինչ կանեմ ... էս Պայծառն ինչ եղա՜ւ ... (իր ննջարանի դուռը բանալով), արի, արի, շատ լաւ է, (կողմը) կոկուում է (նրան) տեսնես հայելի որ չը լինէր աշխարհումս, ձեր ճարն ինչ էր լինելու. մաշուեց, մաշուեց հայելին։

## ՏԵՍԻԼ ԺԵ.

## ՆՐԱՆՔ և ՊԱՅԾԱՌ.

---

**ԳԱԲ.**

(Տեսնելով Պայծառին՝ բաց վարդագոյն շրջազգեստով ներս գալիս), Արի, արի տեսնենք, իմ սիրամարգ, իմ դրախտահաւ, իմ կաքաւ, իմ կեանքի արև:

**ՆՈՒԱՐԴ**

Իմ դեղձանիկ, իմ սոխակ, իմ լուսնեակ, իմ սրտի լապտեր:

**ԳԱԲ.**

Իմ տատրակ, իմ հրեշտակ, իմ հոգեակ, արի, մօտ արի մի կարօտս առնեմ. (Պայծառը մօտենում է, համբուրելով ձակատը), աչքդ լոյս, հայրիկի անուշ բալա ... պրծայ հօ քեզանից, (համբուրում է կրկին):

**ՊԱՅԾ.**

Շնորհակալ եմ, հայրիկ ջան:

**ՆՈՒԱՐԴ**

Ձեռքը համբուրիր, ձեռքը (Պայծառը համբուրում է հօր ձեռքը), էդպէս:

**ԳԱԲ.**

Էլ այսուհետև ինձ ոչ մի բան քեռը չի անի, օխտ՛ (կրկին համբուրելով աղջկայ ձակատը), բախտաւոր լինիս, անուշիկս, բալով սուրբ պսակիդ արժանանաս, երեք օր մնաց, հա. ուրախ ես հօ, աղջիկս:

**ՊԱՅԾ.**

Շատ, շատ, հայրիկ, անչափ ուրախ եմ:

**ԳԱԲ.**

Շնորհակալ ...



**ՊԱՅԾ.**

Անսահման:

**ԳԱԲ.**

Բարով վայելես:

**ՆՈՒԱՐԴ**

Ամէն ... փոխը քո ընկերուհիներին:

**ԳԱԲ.**

Տեսնեմ հիմի մնց ես հանդիպելու սրտով սիրածիդ ... դրանք էլ ինչ եղան ... (բանում է իր ննջարանի դուռը), փեսա՜, պ. Կամսար ... չը պրծաք:

## ՏԵՍԻԼ ԺԶ.

## ՆՐԱՆՔ, ՍԱՀԱԿ ու ԿԱՄՍԱՐ.

---

**ՍԱՀ.**

Եկանք, եկանք ...

**ԳԱԲ.**

Օրհնածներ, ճգնում էիք, ինչ է ... (Կամսարին՝ ցոյց տալով Պայծառի վրայ) աչքերը ջուր կտրուեց, խեղճ երեխիս (Սահակին) քեզ է սպասում ախը ... (Կամսարին), դուք լինէք կսպասէք:

**ՍԱՀ.**

(Խոնարհ գլուխ տալով՝ մօտենում, ձեռք է տալիս Պայծառին) Ա՜խ, իմ թանկագին գանձ, որքան ուրախ եմ, որքան երջանիկ, որ քեզ տեսնում եմ, ի հարկէ ողջ, առողջ, ուրախ ...

**ՊԱՅԾ.**

Փառք Աստուծոյ, շատ լաւ ...

ԳԱԲ.

(Կամսարին՝ աչքով անելով), Սրանց համեստութեանը մտիկ տուր. (հեգնելով) «ա՜խ, ուրքա՜ն ուրախ եմ, ուրքա՜ն երջանիկ, իմ թանկագին գանձ», «փառք Աստուծոյ, շատ լաւ», (Սահակին եւ Պայծառին), հէնց մէնակ էդ։

ՊԱՅԾ.

Էլ ուրիշ ինչ էիք ուզում, որ հայրիկ։

ԳԱԲ.

Տօ ես չէ, աղջիկս, դուք, դուք ... չես իմանում հա՜ ... ա՜յ դու դարմանի տակի ջուր (հեգնելով) «էլ ուրիշ ինչ էիք ուզում, որ» ... ա՜յ, էս, (մօտենում՝ յանկարծ համբուրում է Նուարդին)։

ՆՈՒԱՐԴ

(Իրանից հեռացնելով), է՜հ, դու էլ, քու հաւատն էլ, էդ էր պակաս.

ՊԱՅԾ. ՍԱՀ. և ԿԱՄՍ.

(Միասին) Հա, հա, հա ...

ԳԱԲ.

Դէ լա՜ւ, մի խոովի, հա, հա, հա ... բիր ահալլբխտա՝ բիր ջահալլբխտա, չես իմացել։

ՆՈՒԱՐԴ

Մասխարայ ...

ՊԱՅԾ. ՍԱՀ., ԿՄՍ.

(Միասին) Հա, հա, հա ...

ԳԱԲ.

Դէ լաւ, լաւ, հերիք ծիծաղէք (ցոյց տալով Կամսարի վրայ), Պայծառ ջան, ծանօթացիր, խաչեղբայրդ է, պ. Կամսար Տէր Վարդանեան (Պայծառն ու Կամսարը իրար գլուխ են տալի), դէհ հիմի համեցէք, նստեցէք ... (նստում են)։ Հէյ գիտի ժամանակ, փոխուեց, շա՜տ փոխուեց, այժմ, փա՜ռք Աստուծոյ, փեսի համար աներոջ տան դռները կրնկի վերայ միշտ բաց են, երբ ուզում է ազատ, համարձակ մտնում է։ Ո՞վ էր տուել մեր ժամանակ. առաջ փեսի գալու համար էին նեղանում, հիմա չը գալու համար ...։ Յիշում ես, Նուարդ, սրանից 40 տարի առաջ, գողի պէս որ եկայ քեզ տեսնելու ու մօրդ ձայնը լսեցի թէ չէ՞ ոնց կարից դրմփացի փողոց, էն ժամանակուանից կարծես կողքս ցաւում է, ողորմի իրան, ոնց կելակրի քափկիրը ձեռքին ընկաւ յետևիցս, որ բռնի՜, հա, հա, հա, իսկի չեմ մոռանում ...

## ՏԵՍԻԼ ԺԷ.

## ՆՐԱՆՔ և ԹՈՄԱՍ.

---

ԹՈՄ.

Նանագիալը սալֆէտկէքն ու դանակ չանգալն ուզում ա։

ՊԱՅԾ.

Լաւ, գնա, եկայ, (գնում է) ...

ԳԱԲ.

Ի՞նչ էի ասում ... (մտաբերելով) հա, որ քափկիրը ձեռին ընկաւ քամակիցս ... մի բան ասեմ՝ չը ծիծաղէք ... էն ժամանակուան ծածուկ արած բանը աւելի քաղցր էր ես ասեմ, քան հիմիկուան ոփշկարան ... պոտիկ վախտներս, որ հարևանի բաղից խաղող կամ խնձոր էինք գողանում, աւելի համով էր թուում, քան բաղարից փողով առածը ... յիշում ես, Նուարդ, ինչ զալթներ էինք անում ...

ՆՈՒԱՐԴ

Դէ սուս, սուս, ամօթ է, սիպտակ մազիցն էլ չի ամաչում։

ՍԱՀ.

(Ծիծաղում է) Հա, հա, հա ...

ԳԱԲ.

Քու արևն եմ ասում փեսայ. (Նուարդին) Ինչ ես տալի, որ չը պատմեմ ... միտդ է էն ծիրանի ծառի տակի ... հա, հա, հա ...

ՆՈՒԱՐԴ

(Ձեռքով նրա բերանը փակելով) Դէ սուս, ասում եմ է ... (Սահակին եւ Կամսարին), ողորմած հոգի կեսրայրս էլ սրա օրին մի բան էր, վերին ծայր հանաքչի ... կարծես հայրը փուչացել է՝ որդին քթից ընկել ... (ցոյց տալով պատի վրայ) ա՜, պատկերը, տեսէք, թէ սուտ եմ ասում։

ԳԱԲ.

Հա, քեզ այդ կը սազի, որ ասես, հասկացողը հասկանում է, (Կամսարին) սուտ եմ ասում, ա. Կամսար, (Կամսարն ամաչելով՝ գլուխը կախ է գցում, կողմը) իսկի ձայնը չի դուրս գալի, կասես ուրբաթախօս լինի (Սահակին) փեսա՜ ...

ՍԱՀ.

Հրամայեցէք, հայրիկ։

ԳԱԲ.

Աղօթած հօ չի՞ սա, որ խսկի չի խօսում։

ՆՈՒԱՐԴ

(Կողմը) Վա՜յ, քուանամ ես ...

ԳԱԲ.

Կասես Անտոն ճգնաւորը լինի ...

ՍԱՀ.

Հա, հա, հա ...

ԿԱՄՍ.

(Կողմը) Ի՞նչ է ուզում ասել ...



ԳԱԲ.

Հէր օրհնած, նորահարսը դու ես։

ՆՈՒԱՐԴ

Որ դու աչ ու ձախ դուրս ես տալի՝ մեծ բանի վրայ ես էլի, խնդրեմ խաչեղբօր խաթրին չը դիպչէիր։

ԳԱԲ.

Հա, հա, հա ... ինչպէս իսկոյն տէր կանգնե՛ց, լաւ որ աղջիկն այստեղ չի, նա էլ միւս կողմից պիտի պաշտպանէր ... հանաք եմ անում, հանաք ...

ՍԱՀ.

Չէ, այդպէս է, հայրիկ, սաղ օրը հետը կուռում եմ, չա՜տ ամաչկոտն է տնաքանը. գիտէք ինչիցն է, հայրիկ։ Պատիկ ժամանակ ուսումնարանում միասին էինք կարդում. ես աւարտելիս՝ սա դեռ պատրաստականումն էր, ես երթևեկ էի՝ իսկ սա որդեգիր, հէնց էն ժամանակուանից էնքան ամաչկոտ ու քաշուղ բնաւորութիւն ունէր, որ ընկերները հարս էին դրել անունը։ Ցարդեր չորս պատի մէջ նստողի հալը ինչ պիտի լինի որ ... նոր նոր է աշխարհի երես տեսնում։

ԳԱԲ.

Դէ ասա թարուն պաս ուտողներից է, էլի, էդպիսիների հախից զրքանչդ լաւ կը դայ, թող մի քանի օր մնա՜յ ...

ՆՈՒԱՐԴ

Հը՞, էլի իմ փէչից ձեռք չես քաշում։

ԳԱԲ.

Գժուել եմ ... «զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ», ոնց ձեռք քաշեմ ... (ցոյց տալով Կամսարի վրայ), հաղիր իր ոտով է եկել, սրա նարօտն էլ կապի էլի ... հա, հա, հա ...

ՆՈՒԱՐԴ

Է՜, է՜, խատակ համը տարաք (դուրս է գնում)։

*

ԳԱԲ.

Փալանը շուռ տուց ... խռովեց: Հանաքը դէնը, էլ մը օրուան էք սպասում, պ. Կամսար, ինչի չէք պսակում, վարդապետ հօ չէք դառնալու:

ՍԱՀ.

Խէրով կը լցէք, հայրիկ, ինչքան համոզում եմ՝ ականջ չի դնում:

ԿԱՄՍ.

Ես չեմ ուզում, շատ հնարհակալ եմ ... էլ խօսակցութեան ուրիշ առարկայ չունի՞ք, պ. Գաբրիէլ:

ԳԱԲ.

Ինչու չունեմ, շատ ... բայց աւուր պատշաճի խօսակցութիւն է, մի նեղանաք, Մոլլա Նասրադինի հորթի պատմութիւնը լսել էք ... (կողմը) քեզ որ թողնեն, մնց կը փախչես ...

ՍԱՀ.

(Կամսարին) Սրա հանաքներից չը նեղանաս, ում որ սիրում է՝ հեռը միշտ հանաքներ է անում, (Գաբրիէլին) տեսամ, պ. Գաբրիէլ, մայրիկին էնպէս խռովեցրիք, որ էլ յետ չի գալիս. գնամ խաթրն առնեմ, բերածս ընծաները ցոյց տամ, մի քանի բոպէով ներեցէք (գնում է):

ԳԱԲ.

Հա, մէրը մահանայ՝ փեսէն կշտանայ ... գնա, գնա, գիտեմ մագնիսը քաշում է ... հէյ գիտի ջահելութիւն ...

ԿԱՄՍ.

Չէ, պ. Գաբրիէլ, Սահակը ուղիղ է ասում, հանաքներ շատ էք սիրում:

ԳԱԲ.

Բաս ի՞նչ անենք, չը սիրենք, որդի: Աշխարհիս ցաւերին հանաքներով, որ չը յաղթենք՝ մեզ հում հում կուտեն ցաւերը: Էնց բուն սկզբից ես հանաքով եմ աշխարհ եկել, որովհետև ողորմած հոգի հայրս, ինչպէս ինքն էր ասում, հանաքով է պսակուել: Էդ հանաքը մինչև հիմի հէնց շարունակւում է: Ես էլ եմ հանաքով պսակուել՝ հանաքով էլ ապրում եմ: Պայծառս էլ է հանաքով լոյս աշխարհ եկել՝ հանաքով էլ պսակւում է: Աշխարհիս բոլոր գոյութիւնը հանաքի պտուղ չէ, ի՞նչ է: Մարդկային ցեղի ուրախութիւնների, արտմութիւնների, ցաւերի, վշտերի պատճառը Ադամ Եւայի արած հանաքն է: Մի խօսքով մեր կեանքն էլ է հանաք՝ մեր մահն էլ: Էդ հանաքը, որ կայ՝ ամէն մարդու շինքից կախուած է. էս օր ես եմ հանաք անում՝ էգուց դու, մէկէլ օրը միւսը, չորրորդ օրը մի ուրիշը և այդպէս անվերջ, բայց, փորձել եմ, որքան մարդ շուտ անի այդ հանաքը՝ այնքան լաւ է: Այդ է պատճառը, ես ցանկանում եմ, որ քո հանաքն էլ շուտ տեսնենք, քանի մենք սաղ ենք, քանի դու առողջ ես և երիտասարդ, քանի, փառք Աստուծոյ, ապահով ես և երջանիկ ... հը՞, ի՞նչ կասես, աղբէր, լաւ չեմ ասում:

ԿԱՄՍ.

Շատ լաւ էք ասում, պ. Գաբրիէլ, բայց դուք թղթի մի երեսն էք կարդում:

ԳԱԲ.

Գիտեմ ի՞նչ ես ասում ... երկրորդ երեսը ես աւելի վարժ եմ կարդացել, բայցը ո՞ւր է, գեներալի ուռճիկ ես ստանում, հէր օրհնած ... (հեգնելով) բայց ... բայց ... բայցը որ ցանես՝ գազար դուրս կը գայ:

---

## ՏԵՍԻԼ ԺԸ.

## ԹՈՄԱՍ և ՆԱՆԱԳԻԻԼ.

(Ներս են գալիս եւ մէկը դրան աջ կողմում, միւսը ձախ կողմում ձեռքները կրծքներին դրած՝ արձանի պէս կանգնում, գլուխ են տալիս):

---

**ԳԱԲ.**

Էլ՞, ինչ կայ, ինչու՞ եկաք. ո՞վ կանչեց ձեզ:

**ԹՈՄ.**

Ըսկի աղա. խանումն ասաւ, աղէն որ կը գայ, եկէք նրան գլուխ տուէք ու ձեռքը պաչէք. հըմի եկել ենք (մօտենալով եւ գլխով Նանագիւլին էլ մօտեցնելով), որ ձեռքդ պաչենք (ձեռքը համբուրում են եւ էլի գնում, առաջուան տեղը կանգնում):

**ԳԱԲ.**

Ինչի՞, ի՞նչ էք իմացել որ ...

**ԹՈՄ.**

Մեր կերած խմածը հալալ արէք, աղա:

**ԳԱԲ.**

Երկսով էլ դուրս էք գալիս, այն էլ էսպէս օր:

**ԹՈՄ.**

Գլխներս պատին ենք տուել, աղա, ուր ենք դուս գալի, քեզ պէս աղա որդի՞ ենք գտնելու որ, բաս քո հացը մեր աչքը չի քօռացնի:

**ԳԱԲ.**

Բաս ի՞նչ էք ասում. ի՞նչ ձեռք պաչել է:

**ԹՈՄ.**

Էն ա, որ աղա, ամօթ ա ասել, ես ու Նանագիւլը պրտենք նշանուի, աղա, ըսօր խանումի ու բարիշնի առաջ իրար խօսք տուինք ... մեզ օրհնի, աղա:



**ԳԱԲ.**

Ուղիղ, (Կամսարին) էլի Ադամ Եւայի հանաքն է հա, տեսնաք, իրարից օրինակ են վերցնում. սրանք էլ են հանաք անում:

**ԹՈՄ.**

Վալլահ հանաք չեմ անում, աղա:

**ԳԱԲ.**

Գիտեմ, գիտեմ ... ա՛յ դուք ապրի՞ք, շատ լաւ էք արե՞լ, շնորհաւոր լինի, ծլի՞ք, ծաղկի՞ք, զօրանա՞ք, մէկ բարձի ծերանա՞ք, քիչ ուտէ՞ք շատ կշտանա՞ք, շատ տեսնէ՞ք՝ քիչ զողանա՞ք, հա, հա, հա ... ղէ, հայդէ՛, գնացէ՞ք ձեր բանին (գնում են): Հանաք չէ, բաս ի՞նչ է, պ. Կամսար, դուք ասէք. տեսնում էք, որ էլի Ադամի ու Եւայի հանաքներն են մեղաւոր ... Աստուած ձեզ էլ մի սորուն Եւա պարգեւի ... երեկւան երեխերքն են է՞, նշանուել են ... կեանքի լաղաթն էլ, համն էլ դրանք են տանում, ես ու իմ Աստուած ... չէ, շտապէք, մեղքն ու վարձքը իմ շինքին: Խէրով ոտ էք ունեցել, պ. Կամսար, էս երկու. Աստուած երեքին արժանացնի, երեք հարսանիքն էլ մի դռնով դուրս գայ ... լաւ չեմ ասում:

**ԿԱՄՍ.**

Ասում էք, էլի, պ. Գաբրիէլ:

**ԳԱԲ.**

Քեզ համար եմ ասում, դու գիտես չը փոշմանես:

---

## ՏԵՍԻԼ ԺԹ.

## ՆՐԱՆՔ, ՂԱԶԱՐ, ՀԵՐԻՔՆԱԶ, ԵՍԹԵՐ և ՆՈՒԱՐԴ.

---

**ՆՈՒԱՐԴ**

(Ներս գալով եւ հրաւիրելով). Համեցէք, համեցէք, տանն է:

**ԳԱԲ.**

(Կողմը) Տեսնես ովքեր են, (դէպի դուրս) ով է:

**ՂԱԶ.**

Մենք ենք, մենք, աչքներդ լո՞յս, Գաբրիէլ աղա:

**ՀԵՐԻՔՆԱԶ**

Բախտաւոր լինեն, մի բարձի ծերանան, Սիմոն ծերունու օրը հասնեն: (Եսթերը համբուրում է Գաբրիէլի ձեռքը):

**ԳԱԲ.**

Օ՜ՀՀ դու էլ ես եկել, աղջի ... բարով, հազար բարով եկաք: Լուսնի պէս էք երևում ... շնորհակալ եմ, փոխը ձեր Եսթերին լինի, էս ուղղը ձեր դրանն էլ չոգի, համեցէք, նստեցէք, ախ, ներեցէք, առաջ մէկ իմ պատուական բարեկամի, պ. Կամսարի հետ էլ ծանօթացէք ... Սահակիս խաչեղբայրն է, հետն է բերել, իր մանկութեան ընկերն է ...

**ՂԱԶ.**

Ի՞նչ կը լինի որ ... (ձեռք ձեռքի են տալիս):

**ՀԵՐԻՔՆԱԶ**

Շատ էլ լաւ է արել (ձեռք է տալիս Կամսարին, իսկ Կամսարն ու Եսթերը իրար գլխով բարեւում են):

**ՆՈՒԱՐԴ**

Դէ հիմա աղատ նստեցէք ... էս որ խաչիցն է, մէկ ասէք, տեսնեմ, լաւ որ միտքներդ բերիք. հէնց պէտք է էսպէս օրեր լինեն, որ



մեր դռները բաց անէք ... էլ որ օրուան համար է բարեկամութիւնը, որ գնալ գալը մոռացել էք ..... Եսթերին էլ է մէկ մէկ ուղարկէիք՝ ինչ կը լինէր, դուք չը գիտէք, որ Պայծառս մենակ է:

**ԳԱԲ.**

Ի՞նչ եմ ասել, մէկ էդպէս երեսներին տուր է՞, հա՛ ջանմ սան Նուարդ, էս փեսէն ու Պայծառն ինչ եղան ... ասա գան թաղայ դոնաղներին տեսնեն է՞ ...

**ՆՈՒԱՐԴ.**

Տեսան, տեսան ...

**ՂԱԶ.**

Ի՞նչպէս չէ ... վաղուց ենք եկել ... լաւ ժամանակին հասանք ... փեսէն բերած ընծաներն էր ցոյց տալիս ... տեսանք ու շնորհաւորեցինք:

**ԳԱԲ.**

Լաւ, լաւ ... դէ հիմի ինչ պատասխան էք տալիս Նուարդին, ինչու էք ոտքներդ մեր տանից կտրել:

**ՂԱԶ.**

Ես կանանց գործում չեմ խառնւում, աղբէր, ինչ վրէժ ունիք՝ Հերիքնազից հանեցէք, այ, երեսին եմ ասում. քանի՞ անգամ եմ կուել, թող ինքն ասի:

**ՆՈՒԱՐԴ**

Իմ կռիւն էլ հէնց նրա հետ է:

**ՀԵՐԻՔՆԱԶ**

Ես մեղաւոր եմ, քոյրիկ, խօսք չը կայ, որ մեղաւոր եմ, բայց ասես սրտով չէի ուզում գալ կամ սրան (ցոյց տալով Եսթերին) ուղարկել, չէ, ես ու իմ հոգին չէ, քու Պայծառիդ ազիզ արևն եմ ասում, համա դէ չէր լինում, էլի, թարս էր ընկնում բանը: Մի օր մարդ էր

գալի, մի օր ինքն էր գործ ունենում, մի օր, ես ինչ գիտեմ, ինչ էր պատահում ... շաբաթն էլ երեք անգամ, դու հո գիտես, Նուարդ, ուսուցիչն է գալիս ...

ԿԱՄՍ.

(Կողմը) Տեսնես ինչ է սովորում. անպատճառ ֆրանսերէն կը լինի կամ գերմաներէն: Գաւառացիք միշտ աննպատակ բառերի յետևից են ընկնում:

ԳԱԲ.

Տօ հէրիք սովորի, հէրիք ... ինստիտուտը աւարտեց, պրծաւ, էլ ինչ էք խեղճին չարչարում, մի քիչ էլ թողէք հանգիստ շունչ քաշի, փառք Աստուծոյ, հասել է ... հասած տանձենուն որ շատ ջրես՝ պտուղը կը հոտի, կանհամանայ, պոկելու վախտն է ... պոկիր ու գլուխը կապի:

ԿԱՄՍ.

(Հերիքնազին) Ի՞նչ է սովորում, որ տիկին:

ԳԱԲ.

(Ընդհատելով) Տօ իսկի, ուղղական բառ, սեռական բառի, հայցական զբառ, կոչական ո՛վ բառ, հա, հա, հա ... սովորում ես՝ սովորի ուղղական փեսա, կոչական արի՛ ինձ տար, ո՛վ փեսա:

ՀԵՐԻՔՆԱԶ

Հայերէն, հայերէն է սովորում, պ. Կամսար:

ԿԱՄՍ.

Հայերէ՞ն ...

ՂԱԶ.

Այո՛, մի ճեմարանաւարտ վարժապետից:

ԳԱԲ.

Էդ ո՞վ է ... լսել եմ, բայց չեմ ճանաչում:



ՆՈՒԱՐԴ

Ի՞նչպէս չես ճանաչում, շիլաչի Մարկոսի թոռը:

ԳԱԲ.

Գուրգէնը՞:

ՆՈՒԱՐԴ

Հա՛, հա՛, հէնց նա:

ՂԱԶ.

Մի շատ համեստ ու խելօք տղայ, սուս ու փուս՝ վերին աստիճանի:

ԳԱԲ.

(Նսթերին) Հա՛, տղջի ...

ՆՍԹԵՐ

Այո՛, մի շատ պատուական ու ընտիր երիտասարդ. աւարտել է առաջին կարգի մրցանակով և մի ամսից յետոյ գնում է արտասահման՝ ուսումը շարունակելու:

ԳԱԲ.

Վերջը թէ վարդապետ է դառնալու՝ խելքս բան չի կարում:

ՆՍԹԵՐ

Ինչու՞ անպատճառ վարդապետ և եթէ դառնայ էլ՝ ինչ վնաս. կրթուած կուսակրօնների թիւը մէկով էլ կաւելանայ:

ԿԱՄՍ.

Իհարկէ, շատ ուղիղ է նկատում օրիորդը, կարիքը մեծ է:

ԳԱԲ.

Ուղիղն ասա, օրիորդ, քեզ համար ո՞րն է լաւ, վարդապետ դառնայ՝ թէ աշխարհական մնայ ...

ՆՍԹԵՐ

Ինձ համար բոլորը միևնոյն է:

ՆՈՒԱՐԴ

Երանի ձեր հաւասին. քա ձեզ ինչ, ինչ դառնում է՝ թող դառնայ, նրա ցաւը ձեզ է տուած:

ԿԱՄՍ.

Որ գնում է արտասահման, ուրեմն դուք առանց ուսուցչի էք մնալու, օրիորդ:

ԵՍԹԵՐ

Ո՛չ, պարոն, երկու տարի է՝ ինչ պարապում է ինձ հետ: Ես վերջացրել եմ, վերջին շարադրութիւնս եմ պատրաստում:

ԿԱՄՍ.

Այո՛ ... իսկ նիւթը շարադրութեան ...

ԵՍԹԵՐ

Մեր բոլոր մատենագիրների ոճերի բաղդատութիւնը և թէ ով ինչ ազգի լեզուի ոճին է ենթարկուել՝ իր շարադրութիւնը գրելիս:

ԿԱՄՍ.

Ոչինչ, հետաքրքիր նիւթ է:

ԳԱԲ.

(Կողմը) Մեր ճգնաւորի լեզուն քիչ քիչ բացւում է:

ՀԵՐԻՔՆԱԶ

(Նուարդին) Էդ բաներից որ իմ գլուխս ոչինչ չի մտնում:

ՆՈՒԱՐԴ

Իմը շատ է մտնում:

ՂԱԶ.

Ինձ որ մնար՝ վոխանակ հայոց լեզուի՝ հաշուապահութիւն կը սովորէր և խանութս կը կառավարէր: Ինչքան ասացի, ինչքան խնդրեցի՝ չեղաւ. քանդուեցի, քանդուեցի օտարների ձեռքում. Աստուած թշնամուս առանց տրու ժառանգի չը թողնի:



ԿԱՄՍ.

Մթթէ տղայ չունիք:

ՂԱԶ.

Դժբախտաբար՝ ոչ:

ԿԱՄՍ.

(Կողմը) Հըմմմ ... իսկ ես հայը չունեմ ...

ՆՈՒԱՐԴ

Օգուտն ինչ, որ հաշուապահութիւն սովորէր, աղջիկը որ կայ՝ եաղի ապրանք է, վերջ ու առաջ տանից պէտք է գնայ:

ՂԱԶ.

Այն օգուտը, որ ով էլ լինէր ամուսինը՝ խանութը ինքը կը կառավարէր:

ԵՍԹԵՐ

Ի՞նչ ես մտածում, հայրիկ, դա մի դժուար բան չէ, եթէ դու անպատճառ ուզում ես՝ այդ էլ կը սովորեմ:

ԿԱՄՍ.

(Ծպտալով) Ուրեմն, օրիորդ, դուք ուզում էք մեր հացն էլ կտրել. (կողմը) շատ համակրելի դէմք ունի ... չը գիտեմ, թէ սիրտս ... բայց չէ, երթ յետս իմ սատանայ:

ՂԱԶ.

Մթթէ դուք հաշուապահ էք:

ԿԱՄՍ.

Այո՛:

ՆՈՒԱՐԴ

(Կողմը) Իբրև թէ չի իմանում ... 2000 մանէթի վէքսիլը կամօդս դրի՝ յետոյ ներս թողի:

ԳԱԲ.

Հաշուապահ է ու զօռ հաշուապահ .. տարին 3000 մանէթ ռոճիկ, не шутка братъ ...

ՂԱԶ.

Երեք հազար ... շատ ուրախ եմ ... ի դէպ, ներեցէք մի բան խնդրեմ, բայց ինչ եմ մտածում, այդ անկարելի բան է։

ԿԱՄՍ.

Ի՞նչ էք ուզում ասել, որ։

ՂԱԶ.

Ուզում էի խնդրել աղջկաս հաշուապահութիւն սովորցնելու, բայց աչքի առաջ չունէի, թէ դուք այստեղ չէք կարող մնալ։

ԿԱՄՍ.

Ես ... ես ... իհարկէ ոչ, տեղս չեմ կարող թողնել (կողմը) բայց ... (ձեռքը կրծքին տանելով) լաւիր, սատանա ...

ՂԱԶ.

Ուղիղ չեմ ասում։

ՆՈՒԱՐԴ

Ո՞վ գիտէ, գուցէ, կը մնայ էլ. «որտեղ հաց՝ էնտեղ կաց», ասում է առածը։ Չէք մնայ, պ. Կամսար։

ԿԱՄՍ.

(Նուարդին) Ո՞վ, ես ... (Կողմը) իհարկէ եթէ ...

ԳԱԲ.

Եթէ պայմանները ձեռնտու լինին՝ կարծում եմ ... (կողմը) մեր տղի քսան ընկաւ ջանը։

ԿԱՄՍ.

Այո, եթէ ... գուցէ թէ մնամ ... բայց, չէ, չէ, ուրիշ սատուցիչ գտէք։



ՂԱԶ.

Ձեր 3000-ը ես էլ կը տայի. փոխադրուեցէք ինձ մօտ։

ԳԱԲ.

Լաւ տուեց, աղբէր ...

ԿԱՄՍ.

Այդ բաւական չէ. այդքան ես արդէն ստանում եմ, իսկ եթէ պլիս ...

ՂԱԶ.

Եւ ձեր բնակարանը, եթէ ուզում էք։

ԿԱՄՍ.

Եւ պլիս ...

ԳԱԲ.

(Կողմը) էս էն ճգնաւորն է հա՞ ...

ՂԱԶ.

Ձեր անունդն էլ ...

ՆՈՒԱՐԴ

(Հերիքնազին) Պլուզն ինչ է քա։

ՀԵՐԻՔՆԱԶ

(Նրան) Համբերի տեսնենք։

ԿԱՄՍ.

Եւ դարձեալ պլիս ...

ՆՈՒԱՐԴ.

(Կողմը) Էլի էդ անտէր պլուզը։

ՂԱԶ.

Էլ բան չունեմ աւելցնելու, աղբէր, ես փաս։

ԳԱԲ.

Ձեր աղջկայ ձեռքը, պ. Ղազար, էդ մէկն էլ թող ես աւելցնեմ ...

ՂԱԶ.

Ի՞նչ ... էդ շատ կը լինի ... հա, հա, հա ... վերջը հանաքի դարձրինք բանը՞:

ՆՈՒԱՐԴ

(Բռնելով երկուսի ձեռքերը՝ Իրար մօտ է բերում) Բերէք ես բարիշացնեմ:

ՂԱԶ.

(Ձեռքը յետ քաշելով) Չէ, ես գլուխս քարովն եմ տուել (ցոյց տալով Հերիքնազի վրայ) Նրան հարցրէք, ուզում է՝ թող տայ (ցոյց տալով Եսթերի վրայ), հաւանում է՝ թող առնի:

ՆՈՒԱՐԴ

Բանը մնայ քեզ, Հերիքնազ, տալիս ես, թէ չէ:

ԳԱԲ.

Գլխաւորը քեզ է մնում, աղջիկս, առնում ես, թէ չէ: Ի՞նչ ես ասում Հերիքնազ:

ՀԵՐԻՔՆԱԶ

Ինքը գիտի:

ԵՍԹԵՐ

Հայրիկիս ու մայրիկիս կամքը, որ լինի՝ կառնեմ:

ՀԵՐԻՔՆԱԶ

Ես տի, աղջիկս:

ՂԱԶ.

Ես վաղուց եմ տուել:



ԵՍԹԵՐ

Ես էլ առայ, մայրիկ (ձեռքը մեկնում է Կամսարին, որ ընդունում եւ համբուրում է):

ԲՈԼՈՐԸ

Աստուած շնորհաւոր անի, ուռռռա՜՜ ...

ՆՈՒԱՐԴ

(Կողմը) Փառք Աստուծոյ, 2000-ը մարսեցի:

## ՏԵՍԻԼ ԺԹ.

## ՆՐԱՆՔ, ՍԱՀԱԿ, ՊԱՅԾԱՌ և ՆԱՆԱԳԻԻԼ.

---

ԲՈԼՈՐԸ

(Իրար յետեւից ներս վազելով) Ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեց, ի՞նչ խաբար ա:

ԳԱԲ.

Խէր խաբար է, խէր խաբար, բարով, հազար բարով եկաք, բոլորիս էլ աչքը լոյս: Երեք օրից յետոյ իմ տան շեմքից երեք հարսանիք է զուրս գալու. Սահակն ու Պայծառը մէկ, Թոմասն ու Նանագիւլը երկու (բարձր եւ հանդիսաւոր) Կամսարն ու Եսթերն էլ երեք:

ԹՈՄ.

(Նանագիւլին) Սրանք էլ մածուն կերան, Նանագիւլ ջան:

ՊԱՅԾ.

Ախ, ոլքան ես ուրախ եմ, հոգի ջան (մօտենում եւ համբուրում է Եսթերին):

ՍԱՀ.

(Կամսարին) Հը՞, բարեկամ, կակղեցիր։

ԿԱՄՍ.

Կակղեցի ու կերայ։

ՍԱՀ.

Աչքդ լոյս, համ խնամի դարձար ինձ՝ համ փեսա. խաչեղբայրութիւնդ փաս, տեղդ կը տանք ուրիշին։

ԿԱՄՍ.

Հը՞ ...

ԳԱԲ.

(Կողմը) Ջան ...

ՍԱՀ.

Աներոջս մօրաքրոջ աղջիկն է. (Կամսարը հարցական հայեացքով նայում է Եսթերին)։

ԵՍԹԵՐ

Ուղիղ է, ուղիղ, Կամսար Ջան։

ԿԱՄՍ.

Մէթէ ...

ԳԱԲ.

Բաս ես որ ասում էի ուստա զոքանչ ունի Սահակը, օձն իր ընից կը հանի, սուտ էի ասում։

ՆՈՒԱՐԴ

Լաւ, լաւ, անները զոքանչից պակաս չէ։

ԳԱԲ.

Ինչ և իցէ. Աստուած իրանց բարի տայ. խօսք տուին՝ խօսք առան, ծլին ծաղկին, զօրանան։



ԲՈԼՈՐԸ

Մի բարձի ծերանան, ամէն Տէր Աստուած։

ՆՈՒԱՐԴ

Երբորդութեան սուրբ շնորհը բոլորի գլխին հովանի լինի, զօրացընի ու պահպանի։

ԲՈԼՈՐԸ

Ամէն ...

ՀԵՐԻՔՆԱԶ

Անթառամ պսակին արժանի անի։

ԲՈԼՈՐԸ

Ամէն Տէր Աստուած։

ԳԱԲ.

Ձէն կենայ Դավլաթենց Գաբրիէլի օջախը, ուռռռա՜ա՜ ...

ԲՈԼՈՐԸ

Ուռռռա՜՝ա՜, կեցցէ ...

ՂԱԶ.

Ուստա համա՝ Գաբրիէլ, ես սոված մեռայ ...

ԳԱԲ.

Գնանք, գնանք հիմի իշտահով չայ խմենք՝ հալալ հաց ուտենք (ձեռքը Նուարդի թշին քսելով) Madame Նուարդ, Ջահելացայ, հոգի Ջան,

Que vous êtes joli! que vous me semblez beau!
Sans mentir, si votre ramage
Se rapporte á votre plumage,
Vous êtes le phénix des hôtes de ces bois!

(ուզում է համբուրել)։

ՆՈՒԱՐԴ

(Իրանից հեռացնելով) Դէ կորի՛, էլի յիմար հանաքներդ միտդ ընկան։

ԳԱՌ.

Հա, հա, հա ... լո՛ւս դառնայ հոգիդ La Fontaine ... Margot-ի դասագրքից հէնց էդքանն է միտքս մնացել (բոլորին՝ գլուխը թոթուելով), գնանք, աղբէր, գնանք, (թեւն առաջարկելով Նուարդին՝ թեւանցուկ անելու), joli Նուարդ, je vous prie madame! .. հին հին դարուց յիշատակ՝ թեւիդ մէջը փնտռում եմ ...

ՆՈՒԱՐԴ

(Ցետ հրելով) Դէ ձեռք քաշի է ...

ԳԱՌ.

Ալի, լա՜ւ, մի՛ ամաչի «մին ջահալխատ՝ բիր անալխատ». (Նուարդը թեւը տալիս է.—միւսներին), խնդրեմ, համեցէք. (թեւանցուկ դուրս են գնում։ Նոյնն են անում Ղազարը Հերիքնազի, Սահակը Պայծառի, Կամսարը Եսթերի եւ Թոմասը Նանագիւլի հետ՝ իրար յետեւից դուրս գնալով)։

## ՎԱՐԱԳՈՅՐ։

ՀՍՍՌ-ԱԳԱ ՍԳՊ
Ս. ԱԳ. Ա. Մանուկյան
ԳՐԱԴԱՐԱՆ ՍՆԱՆ

«Ազգային գրադարան»
NL0363779

59.781
3-3637

## ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Դասագիրք գծագրութեան, (ր. տիպ.) գինն է . . . 50 կոպ.
2. Սկզբունք երկրաչափութեան (Դիոտերմէկի) . . . . 40 »
3. Վայելչագրութեան դասաւանդութեան ուղեցոյցը . . 20 »
4. Հայկական գեղագրութիւն (դ. տիպ.) . . . . . 30 »
5. Օժանդակ կրթութիւններ գեղագրութեան . . . . 3 »
6. «Փառնակէս» Գրականական երեկոյ, վոդ. մի արար. . 20 »
7. » 200000, վոդ. մի արար. բ. բարեփ. տպագր. 40 »
8. » Բանաստեղծ, վոդ. մի ար. բ. բարեփ. տպագ. 40 »
9. » «Նիսիա», վոդ. մի արարուածով . . . 40 »
10. » Խոլիրա, վոդ. մի արարուածով . . . 40 »
11. » «Հուսոցի մալը ուսողին հալալ ա» կամ «Ճարպիկ փասսարան», վոդ. մէկ ար. . 40 »
12. » «Իմ արիածները» (զուարճալի իրողութիւն), Նախիջեանի կատարածներից վնասուածների օգտին: . . . . . 20 »
13. » «Կը կակկես՝ կուտես», վոդ. մէկ արար. . 50 »
14. Уроки чистописанія для дѣтей . . . . . 25 »

---

## ԳԱՀԵՍՏՆԷ

Երևան.—Մեղ մոտ.—Հասցէն՝ Макару Теръ Саркисянцъ.
Գրավաճառանոց Պետրոս Յովհաննիսեանի.
Տփխիս.— » Կենդրոնական.
« » Գուտաենբերգ.

---

Գումարով գնողների համար զիջումն կը լինի:

---

Հանակ
գրոշ